№ 70 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 17 — 1897 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 17 № 70

ՔԱԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
հերթանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ոչնչաց ող սերունդ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Մենք սխալված չէինք. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Վաթսունամեայ յոբելեան. Լօնդօնի բանկէրը. Նամակ Անգլիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Թիւրքիայից.

ՈՉՆՉԱՑՈՂ ՍԵՐՈՒՆԴ

I

Այժմ Թիւրքաց Հայաստանի վերաբերմամբ քրիստոնէական մարդասիրութիւնը կատարում է կարմիր խաչի պարտականութիւնը: Քաղաքակիրթ ազգերի մէջ գտնվեցան մասնաւոր շրջաններ, գլխաւորապէս հոգևորականներից, որոնք նպատակ ընտրեցին ապրեցնել նրանց, որոնք ազատվեցան ընդհանուր կոտորածից և որոնք դեռ կարող են ապրել: Բնականաբար, խնամքը պիտի տարածվէր նախ և առաջ ամենից թոյլ, ուրեմն և ամենից թշուառ զոհերի վրա. իսկ անհայր ու անմայր մնացած որբերից աւել թշուառ մարդ հաղիւ թէ կարելի լինի երևակայել: „Մշակի“ մէջ տպվեցան մանրամասն տեղեկութիւններ որբերի խնամատարութեան մասին. մեր ընթերցողները գիտեն որ գերմանական, անգլիական, մասամբ և ամերիկական մասնաւոր ընկերութիւններ ուղարկել են իրանց գործակալներին Թիւրքիա, ուր բացել են որբանոցներ: Դրանց մէջ բարբարոսութեան անմեղ զոհերից շատերը արդէն գտել են ապաստան, ունեն մի կաղ հաց և նոյն իսկ կրթութիւն էլ են ստանում:

Իւրաքանչիւր մարդասիրական գործ արժանի է խորին յարգանքի և շնորհակալութեան: Բայց հայ որբերի խնամատարութիւնը մի հասարակ մարդասիրութիւն չէ, այլ գթասրտութեան զգացմունքի կատարեալ հերոսական արտայայտութիւն:

Պէտք է յիշել թէ ինչ իրական դժոխք է այն երկիրը, ուր երեք տարի թափվեց քրիստոնեաների արիւնը, պէտք է չը մոռանալ որ Թիւրքիայում կանոնաւոր հիմնարկութիւն ստեղծելը կապված է ահագին դժուարութիւնների և արգելքների հետ,—և այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ինչ մեծ գործ են կատարում հայ որբերի բարերարները: Չէ կարելի առանց խորին երախտագիտական զգացմունքի կարդալ Հայաստանի խորքերում գործող եւրոպացի բարերարների տեղեկագիրները. այն խորին համակրութիւնը, որ տածում են խնամատարները դէպի մի նահատակ ազգ, այն սէրն ու գգուանքները, որոնց արժանանում են բաղդի խորթ ու թշուառ զաւակները, միանգամայն խրախոյս և քաջալերութիւն կը ներշնչեն տառապեալներին, որոնք սովորել են տեսնել երկնքի տակ միայն անպատիժ մնացող բռնութիւն:

Բայց որբանոցները գեղեցիկ են իբրև սկզբնաւորութիւն, իբրև նմուշ: Օգնութեան գործը դեռ շատ աննշան ու թոյլ է, համեմատած այն անծայր աղէտի հետ, որի դէմ պէտք է մաքառել: Ընդհանրապէս հաշուում են որբերի թիւը 100,000. դեռ նորերումս հաղորդեցին որ միայն Եզրումի նահանգում գտնվում են 40,000 որբեր: Դա սովատանջ, ոչնչացող սերնդի մի ահագին բանակ է: Քրիստոնէական մարդասիրութիւնը մինչև այժմ այդ բանակի համար հաստատել է մի քանի հատ որբանոցներ, որոնցից իւրաքանչիւրը կարող է ընդունել 100—200 երեխաներ: Նշանակում է որ մարդասիրութեան արածը աւետարանական մի բաժակ ցուրտ ջրից աւել չէ, որ մատուցանվում է տանջվող բազմութեան մի աննշան մասին: Եւ եւրոպացի գործողները իրանց տեղեկագրերի մէջ չեն ծածկում այս հանդամանքը: Կարիքը զարհուրելի չափեր ունի, իսկ օգնութիւնը մի կաթիլ ջուր է ծովի մէջ:

Նրանք կոչում են անում քաղաքակիրթ ազգերի մարդասիրութեան և հաւատացնում են որ եթէ բարեգործութիւնը առատաձեռն լինի հայ որբերի վերաբերմամբ, կարելի է ահագին բարերարութիւններ անել այդ թշուառ սերնդին:

Ուրեմն, այլ ևս ապացոյցների կարօտ չէ այն փաստը, որ քաղաքակիրթ ազգերի նպատակները դեռ չեն կարող բոլորովին ապահովել որբերի ամբողջ սերունդը իսպառ ընչվելուց: Հարկաւոր է աւելի լայն, աւելի ընդարձակ կազմակերպութիւն, որպէս զի օգնութեան գործը կարողանայ հասնել իր նպատակին—ապրեցնել որքան կարելի է շատ մարդկանց, որոնք կարող են ապրել և պիտի թշուառ երկրի ապագայ ազգաբնակութիւնը կազմեն: Սակայն օրատեղից պիտի դայ այդ առատ օգնութիւնը: Ցոյս դնել միմիայն դրսի նպատակների վրա,—նշանակում է նպարել երազներով: Պէտք է որ գործին մատնակցեն ոչ միայն օտար մարդասէրները, այլ և տեղացիները:

Այս պարտականութիւնը, ինչպէս երևում է, հասկացել են Կ. Պոլսի հայերը: Գոնէ Կ. Պոլսի հայ լրագրութիւնը երկար ժամանակ քննում է այն հարցը, թէ ինչ կարելի է անել որբերի համար: Եւ իրաւ, միայն Կ. Պոլիսն է կարող տեղական օժանդակող ոյժ հանդիսանալ մի այնպիսի կարևոր հարցում, որպիսին է տասնեակ հազար որբերին ապրեցնելը:

Միւս անգամ կը տեսնենք, թէ ինչ է մտածում Թիւրքահայերի մտաւոր կենտրոնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՆՔ ՍԽԱԼՎԱԾ ՉԷԻՆՔ

«Մշակի» 63՝ համարում խօսելով «Московскія Вѣдомости» լրագրում լոյս տեսած մի յօդուածի մասին, որ վերաբերվում էր ռուսահայերին, մենք ասացինք. «Մօսկվայի յետադէմ լրագիրն անձնուիրութեան փաստեր է պահանջում մի ամբողջ ազգից: Իսկ մենք այդ վիթխարի պահանջի դիմաց միայն մի փոքրիկ, շատ աննշան պահանջ ենք առաջադրում հայատեաց մամուլին—մի փոքր բարեխիղճ լինել, մի քիչ ուսումնասիրել այն ազգը, որի գլխին ամեն մի ավանտիւրիստ-հրապարակախօս իրաւունք է համարում գայլի աւետարան կարդալ, և ապա միայն վճիռներ կայացնել»: Գրելով այդ տողերը, կարծում էինք մենք երևակայել, որ ընդամենը երկու շաբաթ չանցած՝ Մօսկվայի լրագիրը պիտի բերէ մեզ մի փաստ ևս, որ ապացուցանում է թէ մեր ասածները մարգարէական էին: Մեր յիշած ավանտիւրիստ-հրապարակախօսներից մէկը Թիֆլիսից մի թղթակցութիւն է ուղարկել ռուս յետադէմ լրագրին: Ահա նրա բովանդակութիւնը:

Հայերի մէջ գոյութիւն ունի մի ծածուկ ընկերութիւն «Жого» անունով, որի ճիւղերը ցանցի պէս սփռված են ամեն տեղ—Պետերբուրգ, Մօսկվա, Խարկով, Օդեսա, Նախիջևան, Թիֆլիս, Բագու, Գանձակ, Երևան, Կ. Պոլիս, Թրիէստ, Մարսէյլ, Լօնդոն: Եւ գիտէք ինչ է հայկական այդ սարսափելի «Жого» ընկերութեան նպատակը.—ստեղծել հայկական թագաւորութիւն, որը պէտք է տարածվի Արաքսի ափերից մինչև Բոսֆոր մի կողմից, իսկ միւս կողմից—Իմէրեթիայից մինչև Բագու: Այդ նպատակին հասնելու և մանաւանդ ռուսների դէմ կռուելու համար «Жого»-ն պէտք է իրան օգնութեան կանչի վրացիներին և մի օտար պետութիւն: Կաշառք տալը, մատնութիւն անելը, զբաղարտելը ռուսների դէմ կռուելու համար թոյլատրելի միջոցներ են համարվում. բացի դրանից հայերը աշխատում են ամեն տեղ ազդեցիկ և լաւ վճարվող տեղեր ձեռք բերել, մանաւանդ Պետերբուրգում, որպէս զի կարողանան բոլորին իրանց ձեռքում պահել:

Մօսկվայի յետադէմ թերթի զարհուրելի տգիտութիւնը այս անգամ չահագործողն է մի ինչ մեն ասացինք. «Մօսկվայի յետադէմ լրագիրն անձնուիրութեան փաստեր է պահանջում մի ամբողջ ազգից: Իսկ մենք այդ վիթխարի պահանջի դիմաց միայն մի փոքրիկ, շատ աննշան պահանջ ենք առաջադրում հայատեաց մամուլին—մի փոքր բարեխիղճ լինել, մի քիչ ուսումնասիրել այն ազգը, որի գլխին ամեն մի ավանտիւրիստ-հրապարակախօս իրաւունք է համարում գայլի աւետարան կարդալ, և ապա միայն վճիռներ կայացնել»: Գրելով այդ տողերը, կարծում էինք մենք երևակայել, որ ընդամենը երկու շաբաթ չանցած՝ Մօսկվայի լրագիրը պիտի բերէ մեզ մի փաստ ևս, որ ապացուցանում է թէ մեր ասածները մարգարէական էին: Մեր յիշած ավանտիւրիստ-հրապարակախօսներից մէկը Թիֆլիսից մի թղթակցութիւն է ուղարկել ռուս յետադէմ լրագրին: Ահա նրա բովանդակութիւնը:

Հայերի մէջ գոյութիւն ունի մի ծածուկ ընկերութիւն «Жого» անունով, որի ճիւղերը ցանցի պէս սփռված են ամեն տեղ—Պետերբուրգ, Մօսկվա, Խարկով, Օդեսա, Նախիջևան, Թիֆլիս, Բագու, Գանձակ, Երևան, Կ. Պոլիս, Թրիէստ, Մարսէյլ, Լօնդոն: Եւ գիտէք ինչ է հայկական այդ սարսափելի «Жого» ընկերութեան նպատակը.—ստեղծել հայկական թագաւորութիւն, որը պէտք է տարածվի Արաքսի ափերից մինչև Բոսֆոր մի կողմից, իսկ միւս կողմից—Իմէրեթիայից մինչև Բագու: Այդ նպատակին հասնելու և մանաւանդ ռուսների դէմ կռուելու համար «Жого»-ն պէտք է իրան օգնութեան կանչի վրացիներին և մի օտար պետութիւն: Կաշառք տալը, մատնութիւն անելը, զբաղարտելը ռուսների դէմ կռուելու համար թոյլատրելի միջոցներ են համարվում. բացի դրանից հայերը աշխատում են ամեն տեղ ազդեցիկ և լաւ վճարվող տեղեր ձեռք բերել, մանաւանդ Պետերբուրգում, որպէս զի կարողանան բոլորին իրանց ձեռքում պահել:

Մօսկվայի յետադէմ թերթի զարհուրելի տգիտութիւնը այս անգամ չահագործողն է մի ինչ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

I

Կ. Պոլիս, մայիսի 30-ին

Դարձեալ ստիպված ենք գրել հայ որբերու վրա: Այս ողորմելի փոքրիկ մահկանացուներուն վիճակն օրըստօրէ աւելի ծանր կերպարանք մը կը ստանայ: Այս մասին ազգային պատրիարքարանի տարած խնամքն, ունեցած աշխատութիւնն ու խորհած խորհուրդներն յուսալից են... բնաւ բան մը չընելու համար: Տեղական ազգային լրագիրներուն ի նպաստ այդ խղճալիներու նուիրած երկար յօդուածներն ու ցոյց տուած զանազան միջոցները՝ գնահատելի են... իբրև յաւուր պատշաճի լաւ գրված յօդուածներ՝ կարդալու համար միայն, սակայն ասոնք ամենն ազդմովներ են վասն ոչնչի. ոչինչ, դարձեալ ոչինչ, մինչ ոչինչ... միայն սա կայ, որ՝ լատինները, գերմաններն ու ամերիկեան միսիոնարներն իրենց գործերը կանոնաւոր կերպով կը տեսնեն և հարիւրաւոր, հազարաւոր որբեր՝ լուիկ մնջիկ, առանց թեթև շշնկոց մ'անգամ հանելու՝ կը ձգեն իրենց թակարդն: Ահաւասիկ այս դժբաղդ ազգին գլխուն բարոյական ջարդ մ'ալ, հարուած մ'ալ, և այս անգամ քրիստոնէութեան, մարդասիրութեան և գթութեան անուններով՝ քրիստոնեայ մարդասէր ու գթոտ ձեռքերէ, և սակայն մենք տակաւին կաշխատինք սպանիական դղեակներ կանգնելու: Գաւառներէ ազգային լրագիրներու ուղղուած հանապազօրեայ թղթակցութիւններ, զոր մենք ալ կարդալու դժբաղդութիւնը կունենանք, հանապազօր, հաստատուն ապացոյցներ են այս ամենուն... ահ, սիրտ բեր ու դիմացիր:

Ցայտնի ճշմարտութիւն մ'է, որ երկաթը տաք տաք կը ծեծեն և այնպէս ուզուած ձևին կը դարձնեն. բայց մենք այս երկաթի գործն այնքան ձգձգեցինք, այնքան պաղեցուցինք, որ հիմա չեմք կարող ո և է ձևի մը դարձնել, մինչև որ օտարներ վառեցին, բորբոքեցին իրենց կրակն և հիմա մենք ելեր երեմիական ողբեր կը բառնամք և անկարելիներու վրա միայն կը խորհիմք, բայց այս իրաւունքը ճանչցողն ով է. a bon entendeur salut.

Ըսի թէ՝ անկարելիներու վրա կը խորհիմք.—այո, պատրիարքարանն այժմ տրամադրութիւն ցոյց կուտայ գաւառներէ որբեր բերել տալ Պոլիս՝ անոնց մէկ քանի հարիւրն ազգային հիւանդանոցի որբանոցին մէջ պարակել և մէկ քանի հարիւրն ալ մայրաքաղաքիս շրջակայ գաւառներն ուղարկել ձեռնհաս ազգայիններու՝ իբրև որդեգիր:—Անկարելի է այս. նախ որ՝ թիւրք կառավարութիւնն արդեօք պիտի թոյլատրէ, որ հարիւրաւոր որբեր դան ու լեցուին մայրաքաղաքիս մէջ, և մեր պատրիարքարանն ալ այնքան քաջութիւն ու սիրտ պիտի կրնայ ունենալ դժուարութեանց դէմ դնելու և յարուցուած խոչնդոտներն հարթելու: Երկրորդ՝ պատրիարքարանն արդեօք պիտի կրնայ հարիւրաւոր ոսկիներ հացուցնել՝ միմիայն այդ որբերն իրենց հայրենի երկիրներէն մինչև Պոլիս և Պոլիսէն ալ մօտակայ գաւառները փոխադրել կարողանալու համար, և, եթէ կարենայ իսկ հացուցնել՝ ոչ ապաքէն ընդունայն վատնած պիտի լինի կարևոր գումարներ, մինչդեռ նոյն գումարներով կրնայ, եթէ իրապէս մարդասիրական գործ մը տեսնել կուզէ, աւելի օգտակար միջոց մը գտնելու և այդ խեղճ փոքրիկներն իրենց ծնընդավայրերէն երբեք չը բաժնելով՝ ըստ կարելւոյն խնամելու:

Պատրիարքարանն՝ առաջին օրէն՝ լուրջ պարտականութիւն մ'ունէր կատարելու, այն է՝ շրջաբերականներ հանել ամեն կողմ և չը թողուլ, որ օտարներու ձեռք որբեր յանձնուին, դիւրացնելով անոնց խնամվելու միջոցներն իրենց բնավայրերուն մէջ: Պատրիարքարանը թող թէ չըրաւ այդ, այլ մինչև անգամ մայրաքաղաքիս մէջ, իր աչքին առջև, թողուց՝ որ այդ օտարներն ազատ համարձակ մուտ գտնեն ամեն կողմ, ստակ բաժանեն, առանց իր գիտութեանը թաղական խորհուրդներու հետ բանակցեն, աղքատներու թիւը պահանջեն և անոնց տղաքն հայրենի տունէն խլելով հեռաւոր տեղեր ղրկեն, ոչ թէ անհայր ու անմայր տղաքներ, այլ ընդհանրապէս ծնողք ունեցողներ՝ ստորագրութեան ներքև դաչինքներ դնելով: Արդ ով է մեղաւորը. այսքան անտարբերութեան առջև ով իրաւունք կրնայ ունենալ այդ օտարներուն դէմ ո և է առարկութիւն մ'ընելու. և հիմա որ գործը գործէն անցեր է՝ դարձեալ կարևորին վրա մտածելու խիղճը չեմք ունենար, այլ՝ ինչ որ չը պիտի կրնամք ընել՝ այն բանին վրա օրերով, շաբաթներով, ամիսներով միտք կը յոգնեցունեմք, միայն թող ըսուի՝ թէ մեր պատրիարքարանն ալ հոգածութիւն ունի (!!!):

Պատրիարքարանը՝ թէև շատ ուշ, սակայն այսօր իսկ կրնայ իրական գործ մը տեսնել, եթէ ամենալուրջ եղանակաւ նկատողութեան առնու խնդիրը. լաւ է անագան՝ քան երբեք:

Նախ պէտք է որ բացարձակապէս մերժէ օտարներու միջամտութիւնն և ամեն կողմ շրջաբերականներով արգելէ, որ օտար հաստատութիւններու չը յանձնուին հայ տղաքներ.—Մենք գթութեան ու մարդասիրութեան գործերու դէմ չեմք և անոնց հակառակ առարկութիւն մը չունիմք. որքանամ հաստատութիւններու մարդասիրական այդ գործը կրնայ մեր ազգին համար լոկ բարեգործական ծառայութիւն մը համարվիլ և ազատ մնալ տարբեր մեկնութիւններէ. սակայն ամեն պարագայի մէջ պէտք է որ մեր պատրիարքարանը նախ համաձայնի օրինական պայմաններով և ըստ այնմ թոյլատութիւններ լինին: Երկրորդ՝ պէտք է որ վերջին կոտորածներէ ծանրապէս վնասվող գաւառներու առաջնորդներէ վաւերացեալ ճշգրիտ ցուցակները պահանջէ միայն այն որբերուն, որ իրօք անհայր ու անմայր լինելով՝ չունին նաև զիրենք խնամող կամ պատսպարող ազգականներ, կամ, եթէ ունին իսկ, անձեռնհաս են: Երրորդ՝ պէտք է որ ի նկատի ունենայ՝ թէ որ գաւառներն առաւել կամ նուազ վնասված են և թէ այդ գաւառներու նիւթական ներկայ կացութիւններն իրարմէ ինչ տարբերութիւն ունին և այժմ ինչ վիճակի մէջ են, վասն զի, սա ստոյգ է, որ շատ տեղեր մեծ մասամբ աղքատ ու արհեստաւոր դասակարգերն եղած են չարաչար վնասվողներն, իսկ էֆէնդիական բարեկեցիկ, աղնուաշունչ դասակարգը ոչ թալան տուած է և ոչ ալ սպանված. թիւրքերը խնայեցին անոնց, վասն զի ապագային համար պէտք ունէին անոնց վկայութեանը՝ թէ հայերն էին մեղաւոր: Չորրորդ՝ պէտք է որ լուրջ քննութիւն մը կատարէ՝ թէ այդ վնասված գաւառներուն մէջ ինչ տեսակ վանքեր կան, ինչ վիճակ և տարեկան ինչ հասոյթ ունին նոքա, վնասված են, թէ ոչ և թէ մինչև որ աստիճան վնաս կրած են:

որ «Житель Юга»։ Բայց այդ ծածկանունը բոլորովին չէ կարողանում թաքցնել գրողի ականջները։ Ամեն ինչ պարզվում է նրանով, որ այդ սասար և անամոթ յոդուածի մէջ իբրև հայրենիքի պաշտպան և անխորտակելի հերոս անմահացել է... գիտէք ով... մի սմն Վալերիան Գուրնիա, վրաց «Ցնօբիս Փուրցելի» աղտմելի թերթի խմբագիրը... Եթէ ժամանակակից հերոսատրամները արժանի են որ յիշատակվեն, կասենք որ «Московскія Вѣдомости» լրագրի փառաբանող հերոսը, Կովկասի փառքն ու պարծանքը, «Кавказъ» լրագրի այժմեան խմբագիր պ. Վէլիչկօի աշխատակիցն է։ Բացատրութիւնները աւելորդ են...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աստրախան, 11 յունիսի

Խնդրում եմ տեղ տալ «Մշակի» մօտակայ համարներից մէկում հետեւեալ երկտողին։

Ես նկարվել եմ Թիֆլիսում 1893 թուին լուսանկար պ. Գրիգոր Բաբալեանի մօտ, իսկ այդ ժամանակից մինչև այսօր ուրիշ ոչ մի տեղ։ Սակայն որքան մեծ եղաւ զարմանքս և զայրոյթս, երբ երէկ առիթ ունեցայ տեսնելու այստեղ պատկերների վաճառումով պարապող մի հայ գաղթականի ձեռքում իմ պատկերը, որ լինելով պ. Բաբալեանցի նկարած մեծադիր պատկերի պատճէնը՝ տարբերվում է նրանից ներկայացնելովն ինձ այնպիսի չքնաղանով, որը ես չեմ կրել 1893 թուին։ Չը գիտենալով, թէ որ լուսանկարի գործն է այդ՝ մնում է ինձ հրապարակով բողոքել այդպիսի անպատկառ կամայականութեան դէմ։

Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի նահանգական դատարանը յունիսի 11-ին հաստատած լինելով վերջնականապէս հանդուցեալ Յովհաննէս Խուդադեանի կակը և ճանաչած լինելով Կովկասի հայոց Բարեգործական ընկերութիւնը սեփականատէր նրա թողած կարողութեան, ընկերութեան խորհուրդը, ինչպէս հաղորդում են մեզ, ընտրել է մի մասնաժողով, որին և յանձնել է կարգի բերել Խուդադեանի բոլոր գործերը և մշակել մի ծրագիր հանդուցեալի կամքը կատարելու և ընկերութեան ընդհանուր ժողովի հաստատութեանը ներկայացնելու համար։

—

Կանանց գիւղատնտեսական կրթութեան խնդիրը, որ յարուցել էր սրանից ութ տարի առաջ պրոֆէսսոր Ստերլատ, այժմ հասունացել է բոլորովին և առաջիկայ սեպտեմբերի սկզբին երկրագործութեան մինիստր Երմօլովի նախագահութեամբ կը կազմվի մի յատուկ յանձնաժողով, որ կը մշակի յարուցած խնդրի իրագործութեան ձևերը։

—

Պետերբուրգի մանկական պատկերազարդ «Всходы» ամսագրի յունիսի համարում տպված է Ղազարոս Աղայանցի «Անահիտ» թարգմանութիւնը, «Анаитъ», историческая легенда անունով։ Թարգմանութիւնն արել է Մ. Կարա-Մուրզա։

—

Ինչպէս հաղորդում է «Тифл. Лист.» լրագիրը, «Братская помощь пострадавшимъ въ Турціи армянамъ» ժողովածուի հրատարակութեան առիթով կայացած հանդանակութեան գումարի մի մասը ուղարկվել է Կ. Պոլիս, ռուսաց դեսպան Նելիդովին։ Դեսպանի ուղարկած պատասխանից երևում է, որ այդ գումարը յանձնվել է Կ. Պոլսի հայոց պատրիարքին՝ թաղական հոգաբարձութիւնների միջոցով կարօտ հայերին բաժանելու համար։ Մեր հարուստները, որոնց առարկութեան գլխաւոր կէտերից մէկն էլ այն է, թէ չը գիտեն ուր և ինչ միջոցով դրամական օգնութիւն հասցնել Թիւրքիայի իրանց թշուառ եղբայրներին, որպէս զի ապահովապէս նպատակին հասնի, կարող են այժմ ընտրել վերոյիշեալ ճանապարհը, այն է իրանց օգնութիւնը հասցնել ժողովածուի հրատարակիչներին, ստորագրվելով գրքին, իսկ հրատարակիչները իրանք կը հասցնեն դեսպան Նելիդովի միջոցով կարօտ և թշուառ հայերին։

—

«С. Петербургскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ իբր թէ Կովկասի և Կրիմի գինեգործները որոշել են իրանց հաշվով քանալ մի գինեգործական գաղրոց Պետերբուրգի մօտ։ Դասընթացքը պէտք է լինի երեքամեայ։

—

ՀԻՆ-ՋՈՒՂԱՅԻՑ մեզ գրում են. «Պարսից սահմանում գտնվող ս. Ստեփաննոս Նախավկայ վանքի վանահայրը, ամսիս 4-ին մեզ մօտ գալով, հետեւեալ ցաւալի լուրը մեզ պատմեց։ Մակուի խանութեան մէջ գտնվող քիւրդերը, յարձակվելով վանքի մօտ գտնվող Դարաչամբ հայաբնակ գիւղի վրա, կողոպտեց նրան, կոտորած տեղի չէ ունեցել, միայն վիրաւորել են մէկին։ Գիւղացիները պատսպարվել են վանքում։ Եղելութեան մասին վանահայրը հաղորդել է Թաւրիզ՝ ռուսաց հիւպատոսին, Ամիր-Նիզամին և նոյնպէս Վեհափառ Կաթողիկոսին։ Գիւղացիների դրութիւնը կրիտիկական է, երկիւղից չեն վերադառնում գիւղը, իսկ վանքի հայն էլ ըստ պատուելու վրա է. նրանց մի մասնաւոր օգնութիւն Ջուղայից է ուղարկվում»։

—

ԲԱՐՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Ամսիս 8-ին, ժամը 3—4-ին, կարմիր արևից յետոյ, երկինքը ամպեց և չը տեսնված կարկուտ եկաւ, հողի հետ հաւասարեցնելով այն հասկերը, որ մեծ առատութիւն էին խոստանում խեղճ գիւղացիներին։ Մօտ 700 օրավար, թէ մեր և թէ Վերին-Ազդանի արտերը, փչացան բոլորովին, իսկ այդինները ազատ են մնացել։ Վնասը շատ մեծ է։ Պաշտօնապէս յայտարարված է, ուր հարկն է։ Սուգը պատել է խեղճերին. եթէ օգնութեան ձեռք չը հասնի, գիւղացին կորած է»։

—

ԱՐՄԱՆՍԿԻՑ մեզ գրում են. «Մայիսի 27-ին այստեղ կայացաւ Կարա-Մուրզայի կոնցերտը, որ մեծ աջողութիւն ունեցաւ։ Խումբը պատրաստված էր 36 հոգուց և իրանց ձայներով աչքի էին ընկնում Յ. Մուրադեան և տիկին Ներսէսեան, որոնք երգում էին սոլո։ Շրջականներից և երկախուղու կայարաններից բաւական մեծ ժողովուրդ էր եկել լսելու կոնցերտը»։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Կուիները և սպանութիւնները անպակաս են Շամախուում, մանաւանդ Թուրքերի մէջ, չնորհիւ ոստիկանութեան թուլութեան... Ամսիս 11-ին, երեկոյեան, «չայչիխանայում» նստած ժամանակ կռիւ է ծագում երկու Թուրքերի մէջ, որոնցից մէկը հանում է ատրճանակը և արձակում հակառակորդի վրա, որը քաղաքային վարչութեան անդամն էր։ Վիրաւորը այժմ անյուսալի դրութեան մէջ է։ Բայց այդ դէպքը առաջինը չէ և չէ էլ կարելի վերջինը համարել։ Դեռ չատ ժամանակ չէ անցել, երբ դարձեալ տեղի ունեցան երկու այդ տեսակ ցաւալի սպանութիւններ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Новости» լրագրի մէջ կարդում ենք. «Բացի կրետական հարցից, մեր առաջ է և հայոց հարցը։ Մեծ սխալ կը լիներ եւրոպական դիպլոմատիայի կողմից, եթէ նա հանդատանար դոյութիւն ունեցող statu quo-ով և դադարէր պնդելու, որ խոստացված բէֆորմները մացնվեն Թիւրքիայում։ Բէֆորմները անպայման հարկաւոր են. անկարելի է թողնել Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը իր այժմեան վիճակում, որ ամեն տեսակ խռովութիւնների և անկարգութիւնների աղբիւր է։ Փոքր-Ասիայի անկանոն դրութեան մի պերճախօս ապացոյցն ես այն է, որ ֆելդմարշալ Շաքիր-փաշան, հայաբնակ վեց նահանգների գլխաւոր քննիչը, հրաժարական է տուել, որովհետև անկարելի է համարում կատարել իրան յանձնած գործը—խաղաղացնել և հանգստացնել այդ նահանգները...

—

«Standard» լրագիրը հաղորդում է, որ գործերի դրութիւնը Փոքր-Ասիայի հայկական նահանգներում անտանելի է։ Ճշմարիտ է, այժմ այլ ևս չը կան հաւաքական կոտորածներ (որոնց մեծ բարերարութիւն պէտք է համարել, որ խմբովին չեն կոտորում հայերին), բայց մասնաւոր սպանութիւններ, բռնաբարութիւններ ամեն օր անպակաս են։

—

Վանի շրջակայքի բազմաթիւ գիւղեր մնացել են բոլորովին առանց մշակութեան։ Գիւղացիները չեն վերադառնում իրանց գիւղերը, վախենալով նոր յարձակումներից։ Փախած գիւղացիները սպասում են, որ կարգ և ապահովութիւն հաստատվի, որպէս զի կարողանան ապահով կերպով վերանորոգել իրանց տնտեսական պարապմունքները։

—

Որբերի խնամատարութեան գործը դարձել է բողոքական և կաթոլիկ միսիոնարների գլխաւոր պարապմունքը։ Փոքր Ասիայի բոլոր մեծ կենտրոններում բացվում են որբանոցներ։ Խարբերդ, Բիթլիս, Դիարբեքիր, Վան, Ակն և ուրիշ քաղաքներ այժմ պատսպարում են մեծ թիւով երկու սեռի մանուկներ։

ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆ

V

XVII դարից Իրլանդիան Անգլիայի համար մի նուաճված երկիր էր, բայց ունէր իր տեղային պարլամենտը։ 1800 թուականին ջնջվեց ինքնավարութեան այդ վերջին նշոյլն էլ. Իրլանդիան հրատարակվեց Անգլիայի հետ ձուլված, և կարող էր իր ներկայացուցիչներն ունենալ անգլիական պարլամենտում։ Մենք արդէն յիշեցինք թէ ինչ անտանելի հալածանքների էր ենթարկված այդ խեղճ կղզին։ Իրլանդացին իր սեփական եկեղեցի statu quo-ով և դադարէր պնդելու, որ խոստացված բէֆորմները մացնվեն Թիւրքիայում։ Բէֆորմները անպայման հարկաւոր են. անկարելի է թողնել Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը իր այժմեան վիճակում, որ ամեն տեսակ խռովութիւնների և անկարգութիւնների աղբիւր է։ Փոքր-Ասիայի անկանոն դրութեան մի պերճախօս ապացոյցն ես այն է, որ ֆելդմարշալ Շաքիր-փաշան, հայաբնակ վեց նահանգների գլխաւոր քննիչը, հրաժարական է տուել, որովհետև անկարելի է համարում կատարել իրան յանձնած գործը—խաղաղացնել և հանգստացնել այդ նահանգները...

—

«Standard» լրագիրը հաղորդում է, որ գործերի դրութիւնը Փոքր-Ասիայի հայկական նահանգներում անտանելի է։ Ճշմարիտ է, այժմ այլ ևս չը կան հաւաքական կոտորածներ (որոնց մեծ բարերարութիւն պէտք է համարել, որ խմբովին չեն կոտորում հայերին), բայց մասնաւոր սպանութիւններ, բռնաբարութիւններ ամեն օր անպակաս են։

—

Վանի շրջակայքի բազմաթիւ գիւղեր մնացել են բոլորովին առանց մշակութեան։ Գիւղացիները չեն վերադառնում իրանց գիւղերը, վախենալով նոր յարձակումներից։ Փախած գիւղացիները սպասում են, որ կարգ և ապահովութիւն հաստատվի, որպէս զի կարողանան ապահով կերպով վերանորոգել իրանց տնտեսական պարապմունքները։

—

Որբերի խնամատարութեան գործը դարձել է բողոքական և կաթոլիկ միսիոնարների գլխաւոր պարապմունքը։ Փոքր Ասիայի բոլոր մեծ կենտրոններում բացվում են որբանոցներ։ Խարբերդ, Բիթլիս, Դիարբեքիր, Վան, Ակն և ուրիշ քաղաքներ այժմ պատսպարում են մեծ թիւով երկու սեռի մանուկներ։

Այս քննութիւնները կատարելէ յետոյ պատրիարքարանն իւրաքանչիւր գաւառի նիւթական կարողութեանը, կրած վնասուն, ունեցած որբերու թիւն և նոցա հանգամանքին համեմատ անօրէնութիւններ պէտք է որ ընէ՝ մէն մի գաւառի առաջնորդական կենտրոնի մէջ մասնաւոր հոգաբարձութիւններ հաստատելով, առաջնորդին կամ փոխանորդին նախագահութեան ներքև։

Քանի որ Ամերիկեան միսիոնարներն և այլ օտարներ, պէտք է այսպէս ըսել, գումարներ կը զոհեն այդ խղճալի որբերուն համար՝ միայն զանոնք կրթելու, խնամելու նպատակաւ, և ուրիշ տարբեր նպատակ մը չունին, այսինքն՝ զուտ մարդասիրական է իրենց գործը, մեր պատրիարքարանը պէտք է պահանջէ՝ որ այդ գումարները պատրիարքարան ղրկվին՝ քանի որ հայ որբերու համար են, և բարդվին մի և նոյն նպատակի համար գաւառներէ և ուրիշ տեղերէ մեր ազգայնոց կողմանէ ղրկված գումարներու վրա, վանական հասոյթները յատկացուին այդ որբերուն, և պատրիարքարանը իւրաքանչիւր գաւառի կարողութեանն և նոյն գաւառի որբերուն թիւն քանակութեան համեմատ տարեկան որոշեալ գումար մը յատկացնելով՝ նոյն որբերը վանքերու մէջ ամփոփէ՝ ուր դիւրաւ կուսանին իրենց լեզուն և կրօնն, և ամեն տարի հաշիւ պահանջէ տեղական խնամակալութիւններէն։ Գործը ծանր է, աշխատութիւնն ալ ծանր պէտք է լինի, և մեր ազգային պատրիարքարանն եթէ այսչափ ծանրութիւն մը ալ չը ստանձնէ այսպիսի դժուարին ժամանակի մը մէջ, ինչ պիտի ընէ ուրեմն՝ գործ մըրած լինելու համար։ Վեց ամիսներէ ի վեր շատ խօսքեր լսեցինք, շատ խոստումներու իրագործմանն ըսպասեցինք՝ բան մը չը տեսանք, թուղթերու վրա շատ գեղեցիկ բաներ գրուեցան և լրագիրներն իրենց սովորական չոզսբորթ լեզուով գովեստներով հրապարակեցին՝ սակայն ամենն ի դերև ելան և եղած գովեստները պերճախօսութիւն միայն մնացին. գնէ սա աղօրմելի որբերուն ապագան ապահովէին, օտարներու ձեռք անցց սրտերուն մէջ՝ ազգի, կրօնի սէրը չը պաղեցնելու մէկ ճարը գտնէին, ազգին մեծագոյն մասը դարձեալ մասամբ մխիթարված պիտի տեսնէր զինքը...

Գերուկ

II

Կ. Պոլիս, յունիսի 5-ին

«Մշակի» ընթերցողներն անշուշտ կը յիշեն՝ թէ Բ. Դուռն անցեալները պատրիարքարան ղրկած էր գիտողագիր մը, որով կը մեղադրէր՝ մասնաւանդ թէ կարգիլէր Իզմիրլեան և Շիշմանեան որբագաններուն՝ ինչպէս նաև հայր Խարխանեանին՝ չը միջամտել ընաւ Երուսաղէմի մէջ, ուր աքսորուած են, եկեղեցական հոգևոր պաշտօններու։

Պատրիարքարանն այս մասին բացատրութիւն պահանջած էր Երուսաղէմի պատրիարքէն՝ որ, ինչպէս տեղեկացայ ամենաստոյգ աղբիւրէ, պատասխան մը ղրկելով առ Օրմանեան պատրիարքն՝ բողոքեր է. Բ. Դրան այդ գիտողագրին դէմ, յայտարարելով՝ թէ կառավարութիւնն երբէք իրաւունք չունի Երուսաղէմի հայոց վանքին կրօնական գործերուն խառնուելու, թէ յիշեալ եկեղեցականները, թէն աքսորականներ, սակայն իրենց կրօնական իրաւունքներէն զրկուած չըլլալով՝ իրաւունք չը կայ ընաւ զանոնք արգելելու կրօնական արարողութիւններէ, և, եթէ հարկ էր արգելել, Բ. Դուռը պէտք էր որ նախապէս տեղեկութիւն տուած ըլլար իրեն (պատրիարքին),—և պահանջեր է՝ որ համաձայն սոյն պատասխանին, պատասխանէ Բ. Դրան պաշտօնագրին և ինքն՝ Օրմանեան պատրիարքը։

Այս ամէնը չատ աղէկ։ Ամեն օր գոհ կը մնայ Երուսաղէմի պատրիարքէն, որ զրկեալներու պաշտպան կը կանգնի և չը թողուր որ թիւրքական բարբարոսութիւնը մինչև մեր եկեղեցիին ս. սեղանի իրաւունքներն ալ բռնաբարէ. սակայն ցաւալի է որ՝ երբ պատրիարքն ս. Երուսաղէմի՝ մէկ կողմանէ յիշեալ տարագրեալ եկեղեցականներուն հոգևոր իրաւունքները չը կամենար անարդարութեան մատնել, միւս կողմանէ, ինչպէս ստուգած եմ, այդ բարձրաստիճան եկեղեցականները բոլորովին զրկուած են եղեր հոգևոր պաշտամունքէ և եկեղեցական հանդէսներու մասնակցութենէ. եթէ իրաւ է այս, ասոր կըսեն politique de sauver la chèvre et le chou։

Մեր պատրիարքարանի պարտքն է ուրեմն խղճի օրէնքով, ճշմարտութեան ձայնով և կատարեալ անկեղծութեամբ դէմ դնել այս կերպ անարդար պահանջումներու և թոյլ չը տալ, որ ամէն մարդ, ամէն իշխանութիւն իր ուզածն ընէ։ Օրէնք կայ, իրաւունք կայ, խիղճ կայ, և ասոնց առջև ամեն առարկութիւն պէտք է որ լռէ... բայց որո՞ւ հասկացնել...

Սուլթանի կառավարութենէն օրէնք, իրաւունք սպասել՝ արդէն յիմարութեան գերագոյնն է, իսկ հոգևորականներէն՝ մանաւանդ մեր բարձրաստիճան և պաշտօնի վրա գտնուող հոգևորականներէն խիղճ, դժուրիւն ակնկալել՝ այդ ինձ համար անբացատրելի է։

—

Լուր հասաւ այստեղ՝ թէ Կիլիկիոյ ինքնակոչ կաթողիկոս՝ Գաղանճեան չեպիսկոպոսը, կառավարական հրամանով Պէրութ գնացեր է՝ ժամանակ մը այնտեղ մնալու համար՝ իր ամենասիրելի Նաղըմի քով, որ հիմայ, ի վարձատրութիւն հայկական կոտորածի ժամանակ իր ցոյց տուած գաղանային հերոսութեան, նոյն քաղաքի կուսակալ է։ Անհաւասիկ թրքական խաղ մալ, որուն առարկայ դարձած է մեր պատրիարքարանն այս անգամ ևս...

Գաղանճեան՝ երեւութապէս աքսորեալ մէ կառավարութեան կողմէն, բայց ոչ Երուսաղէմ ուրիշ եկեղեցական աքսորեալներու պէս, այլ՝ Պէրութ՝ իր բարեկամին քով՝ որ կարող է զինքը Կիլիկիա վերադարձունել անմիջապէս՝ երբ հարկը պահանջէ։—Կառավարութիւնն այս վարպետ միջոցը գործածելով՝ պատրիարքարանի բերանը կը գոցէ. պատրիարքարանը տակաւին այս մասին պահանջելու բան մը ունի՞ կառավարութենէն.—չէ՞ որ Գաղանճեանի կաթողիկոսութիւնն անվաւեր կը համարէր, անաւասիկ այդ անվաւեր կաթողիկոսն աքսորուած է, բայց կառավարութիւնն ալ Ալէքսիճեան եպիսկոպոսը չուզեր, պատրիարքարանն ալ պէտք է որ այդ եպիսկոպոսին օձիքը թողու և նոր ընտրութիւն կատարէ... Բայց ճնշումը, խարդաւանքը, մեքենայութիւնները... պատրիարքարանն արդեօք ապահովէ՞ որ այդ խարդաւանքներու, մեքենայութիւններու և ճնշումներու վիժածը պիտի չըլլայ դարձեալ մի և նոյն Գաղանճեանը...։

Լուռ,—սպասեմք...

Վահէ

կան երկրում մի կտոր հողի տեր չէր, իսկ նրա կրօնը, կաթոլիկութիւնը, անգլիական օրէնքներով արգելված բան էր. կաթոլիկը իրաւունք չունէր վարել որ և է պետական և հասարակական պաշտօն։ Պատմութիւնը պահել է այն փաստը, որ Գէորգ III երկու անգամ հրաժարվեց տալ կաթոլիկներին օֆիցերական աստիճաններ։ Իրլանդական գիւղացու ծայրահեղ աղքատութիւնը առասպելի կերպարանք էր ստացել։ Երկիրը թշուառ էր մանաւանդ այն պատճառով, որ ազգաբնակութիւնը աճում էր, իսկ հողային պայմանները մաղի չափ փոփոխութեան չէին ենթարկվում. քաղցած, անօգնական մարդկանց թիւը սարսափելի էր։

Բայց անգլիական բռնութիւնները չը կարողացան մեռցնել մի մեծ ժողովրդի արդար պահանջները։ Իրլանդիայի դատը դարձաւ մի ահեղ պայքարի առարկայ. նա աշխարհ բերեց մի շարք հերոս հայրենասէրներ, որոնք իրանց տաղանդի այժմով հաղորդեցին արդարութեան դատին համաշխարհային հետաքրքրութիւն։ Հարստահարված ժողովրդի բողոքը, նրա հեծեծանքների արձագանքը թնդացրեց աշխարհի առաջ Օ'կոնոլը։ Այս մարդը անգիր ժողովրդականութիւն ստացաւ լուսաւորված աշխարհում. որքան և յամառ ու քարասիրտ լինէր անգլիական պահպանողականութիւնը, որ պարլամէնտում անգիր մեծամասնութիւն ունէր և պաշտպանութիւն էր գտնում նոյն իսկ գահի առաջ, բայց նա հարկադրված եղաւ զիջումներ անել Օ'կոնոլին. կաթոլիկները ստացան մի քանի իրաւունքներ։ Բայց դա, ի հարկէ, քիչ էր։ Իրլանդացի հայրենասէրները առաջ տարան իրանց պայքարը. նրանց ցանկութիւնն էր նորից ձեռք բերել տեղական ինքնավարութեան իրաւունքը, որ կորցրել էին 1800 թւականին։ Կազմվեց «Երիտասարդ Իրլանդիա» կուսակցութիւնը, որ յեղափոխական միջոցների դիմեց իր ծրագիրը իրագործելու համար։ Նրան մղում էր տալիս ժողովրդի թշուառ դրութիւնը։ Իրլանդիայում սովորական բան էր դառել սովը, բայց մանաւանդ սարսափելի էր 1846 թւականի սովը։ Ժողովուրդը անգիր քանակութեամբ դաղթել սկսեց. և այդ ժամանակից դաղթականութիւնն էլ դարձաւ սովորական բան, երկիրը անդադար աւերվում էր. հինգ տարվայ ընթացքում 8,200,000 ժողովրդից Իրլանդիայում մնաց 6,500,000։ Հողային օրէնքների անարդարութիւնը տարիների ընթացքում այն աստիճանին հասցրեց, որ 1891 թւականին թշուառ կղզում մնացել էին միայն 4,700,000 հոգի։—«Երիտասարդ Իրլանդիան» չէր կարող անտարբեր կերպով դիտել ժողովրդի սպառվելը։ Խրախուսվելով 1848 թւականի ֆրանսիական յեղափոխութիւնից, նա ապստամբութիւն յարուցեց Իրլանդիայում։ Օ'կոնոլի բարոյութիւններին հետևում էր տէրրօրը. այս շրջանում հռչակվեցան Օ'Բրիէն, Միչըլ։ Բայց ապստամբութիւնը աջողութիւն չունեցաւ. խմբի ղեկավարները կալանաւորվեցան և աքսորվեցան Աւստրալիա։ Անգլիական կառավարութիւնը խիստ օրէնքներ մացրեց, երկիրը հրատարակեց պատերազմական դրութեան մէջ։ Ապըստամբութիւնը խեղդվեց և Իրլանդիայի դատը երկար ժամանակ մատնվեց լռութեան։—Ծանր լուծի տակ ընկած երկիրը ոչինչ չէր ասում, բայց «Երիտասարդ Իրլանդիայի» փոխարէն Ամերիկայում կազմվեց «Ֆէնիների» դաղտնի ընկերութիւնը, որի նպատակն էր քաղաքական ապստամբութիւնների, տէրրօրական գործողութիւնների միջոցով ձեռք բերել թշուառ Իրլանդիայի ազատութիւնը։

Բայց հզօր, լուսաւոր և անգիր Անգլիան ոչինչ էր համարում մի բուռն ժողովրդի այդ օրհասական ջանքերը։ Եւ Իրլանդական հարցը դուցէ միշտ մնար աղատասէր իրլանդացիների սրտում թաղված մի տենչանք և Ֆէնիների խէնջարների վրա փորագրած մի նշանաբան, եթէ չը լինէր Անգլիայի նարագոյն պատմութեան այն հոյակապ սիւնը, որի անունն է Գլադստոն։ Անուններ կան, որոնք մի մի անգիր հասկացողութիւն են։ Մինչդեռ Բիսմարկ նշանակում է խաւար, բռնակալ ոյժ, հին աշխարհ նոր կեղևի տակ, Գլադստոն նշանակում է արդարութիւն, մարդկային մտքի ամենալայն, օրինական ազատութիւն։ Այս մեծ մարդասէրը Իրլանդական դատի պաշտպան հանդիսացաւ։ Իրլանդիան հանդէս էր հանել մի մեծ մարդ, որ իր կեանքի նպատակ էր ընտրել բազմաչարչար կըղզու ազատութիւնը։ Դա Պարնէլն էր։ Գլադստոն ձեռք մեկնեց արդար դատի անվախ զինուորին։ Անգլիական պարլամենտում մի քանի հերոսական յաղթութիւններ եղան իրլանդացիների օգտին։ Բայց Գլադստոն ձեռք առաւ ուելի հսկայական ծրագիր. Իրլանդիան պիտի ստանար այն, ինչից զրկվել էր 1800 թւականին, այն է՝ տեղական ինքնավարութիւն և պարլամենտ։ Դա հռչակաւոր Հօմ-Ռուլն էր։ Երկար պատերազմներից, յամառ մրցութիւններից յետոյ այդ օրինագիծը հանվեց անգլիական պարլամենտի առաջ, բայց անգլիական ազգը կարծես յոգնել էր, կարծես այլ ևս չէր կարողանում ընդունել ազատամիտ բէֆորմների չարունակութիւնը, որոնք ծրագրվում էին մեծ ծերունու ղեկավարութեամբ։ Ազնուականութիւնը միացաւ բոլոր պահպանողական տարրերի հետ, իր կողմը գրաւելով նոյն իսկ ազատամիտ կուսակցութեան մի մասը։ 1893 թւականին համայնքների ժողովն ընդունեց Հօմ-Ռուլը, բայց լորդերի պալատը մերժեց։ Արիստոկրատիան խեղդեց Իրլանդիայի ազատութիւնը, և այժմ իրլանդացի գիւղացին նոյն թշուառ, անհող աղքատն է, որ հեծում է կալուածատիրոջ բռնութիւնների տակ։ Իրլանդիան չէ մեծանում, չէ առաջադիմում, քանի որ նրա ժողովուրդը անգլիական լորդերի սարուկն է մնում։

Ահա թէ ինչու իրլանդացիները, ինչպէս հաղորդեց հեռագիրը, վճռեցին չը մասնակցել Վիկտորիա թագուհու յոբելեանական տօնախմբութիւններին։ Իրլանդիան իր ակնկալած բարիքները չէ ստացել 60 տարվայ թագաւորութիւնից։ Ընդհակառակն, նա ներկայացնում է անարդարութեան, ճնշված և իրաւազուրկ մի ժողովրդի ողբալի վիճակը։ Իրը, Վիկտորիան, ի հարկէ, անձնապէս ոչինչ ազդեցութիւն չէ արել իրլանդական դատի վրա։ Բայց յայտնի է, որ թագուհին միշտ առանձին համակրութիւն ցոյց է տուել պահպանողական կուսակցութեան. լորդ Բիկոնսֆիլդ, մարկիզ Սալսբիւրի նրա սիրելի մինիստրներն էին և են, մինչդեռ Գլադստոն չէ արժանացել նրա առանձին համակրանքին։ Սա մի ընտրոյ հանգամանք է։ Գլադստոն միշտ հակառակ է եղել թէ Անգլիայի արտաքին եռամոլ, չահախնդիր քաղաքականութեան, թէ պահպանողական կուսակցութեան օգուտ և քարայնող ձգտումներին։ Անգլիան էլ, չը նայած իր բարեկարգութեան, իր հսկայական առաջադիմութեան, հայրենասիրութիւն է համարում իր ազգայնական նեղ գաղափարները։—Բայց ինչ և լինի ժամանակակիցների վերաբերմունքը, Վիկտորիայի թագաւորութիւնը եթէ ունի պատմութեան մէջ պարծանքի կոթող, դա միայն Գլադստոնն է։

Ինչ է ցոյց տալիս Իրլանդիայի դարաւոր դատը։—Այն, որ Անգլիան միայն արտաքին քաղաքականութեան մէջ չէ իր նեղ չահերին զոհում ազգերի ազատութիւնը, այլ և ներքին գործերի մէջ էլ նա դեռ այն աստիճան ազատամտութեան չէ հասել, որ կարողանայ զոհացում տալ մի ճնշված, թշուառ ժողովրդի կատարելապէս արդար պահանջներին։ Ինչպէս յայտնի է, անհատի բարձրագոյն առաքինութիւնն է ընդունել իր նմանի մարդկային իրաւունքները։ Ազգերի վերաբերմամբ էլ պահանջում են բարոյականութեան այս չափը։ Անգլիան իր բարգաւաճման երկար շրջանում չը կարողացաւ նոյն իսկ մօտենալ այդ չափին...

Լ.

ԼՕՆԴՕՆԻ ԲԱՆԿԷՏԸ

Յունիսի 6-ին Լօնդօնում, կայսերական ինստիտուտի շինութեան մէջ, հանդիսաւոր բանկէտ տեղի ունեցաւ ի պատիւ անգլիական կօլօնիաների 11 պրէմիէրների (տասներկուերորդը չէր կարողացել հասնել)։ Բանկէտին նախագահում էր Ռէլսի իշխանը, և հրաւիրվածների թւում կային պահպանողական և ազատամիտ կուսակցութիւնների նշանաւոր ներկայացուցիչները, ինչպէս Սալսբիւրի, Զէմբէրլէն, Բոզբերի, Կիմբերլէյ և ուրիշները։ Բոլոր վերոյիշեալ անձինք ճառեր խօսեցին. բացի դրանից, հռետորների թւում կային Կանադայի առաջին մինիստր Լօրիէ, Նոր Հարաւային Վալլիսի պրէմիէր Բէյդ և աւստրալիական կօլօնիաների միւս ներկայացուցիչ Տէօրնէր։ Այդ ճառերով անգլիական պետական մարդիկ կամենում էին պարզաբանել այն կապերը, որոնցով չաղկապված են կօլօնիաները Միացեալ Թագաւորութեան հետ, և բոլոր հռետորները այն եզրակացութեան էին գալիս, թէ ամենամեծ կապը Բրիտանական կայսրութեան զանազան մասերի համար ազատ հիմնարկութիւններն են, որ ստեղծել է Անգլիան կօլօնիաներում։

«Մեր երկրում,—ասաց Լօրիէ,—և շատ կարելի է Անգլիայում ևս, այն կարծիքն էր յայտնվում, թէ Կանադան, որը իր ազգաբնակութեան թւով շատ անկախ ազգերից բարձր է, կարող է առանձին ազգ դառնալ։ Ես կը պատասխանեմ դրան պարզ կերպով. Կանադան հէնց այժմ էլ ազգ է։ Կանադան ազատ է, և այդ ազատութիւնը—մեր ազգութիւնն է։ Թէպէտ Կանադան ընդունում է Մեծ-Բրիտանիայի գերիշխանութիւնը, բայց ես կարող եմ ասել, որ անկախութիւնը չէ կարող մեզ մեր այժմեան ունեցածից աւելին տալ։ Նոյն միտքը յայտնեց և Բէյդ, որը խօսեց աւստրալիական կօլօնիաների պրէմիէրների կողմից։

«Ես կարծում եմ,—ասաց նա,—որ մեր մէջ չի գտնվի և ոչ մէկը, որ ուզենար վերադառնալ ներկայ թագաւորութիւնից առաջ տիրապետող գաղթականական վարչութեան մեթոդին։ Վերջին 40—50 տարիների ընթացքում անգլիական պետական մարդկանց իմաստուն և մեծահոգի քաղաքականութիւնը փայլուն հետևանքներ տուեց։ Այդ ժամանակամիջոցում նրանք թուլացրին կայսերական կօնտրոլը, բայց դրանով աւելի ևս մեծացրին կայսերական զօրութիւնը։ Պաշտօնականութեան հին կապերը, շատ կարելի է, թուլացան, բայց նրանց տեղը բռնեցին չնորհակալութեան և համակրութեան կապերը... Այդ պատճառով թագուհուն չնորհաւորելու համար երկրագնդի ամեն ծայրերից եկող հիւրերի մէջ չի գտնվի և ոչ մէկը, որը իր սեփական կամքով եկած չը լինէր։ Մեր աւստրալիական կօլօնիաները ազատված կերպով յայտնում են իրանց օրինականութիւնը դէպի կայսրութիւնը, որովհետև նրանք հաւատացած են, որ այնտեղ, ուր պարզված է բրիտանական դրօշակը, բոլոր մարդիկ, առանց դասակարգի և դաւանութեան խտրութեան, վայելում են ազատ վարչութեան և արդարութեան բարիքները»։ Բէյդի ճառը ծածկվեց ծափահարութիւններով։ Նոյնպէս մեծ աջողութիւն ունեցաւ և լորդ Բոզբերիի ճառը։ Նա ասեց.

«Ամերիկական մեծ հռետոր Դանիել Վէբսթէրը իր ճառերից մէկի մէջ նկարագրեց, թէ որպիսի հռչակ են վայելում բրիտանական պահպան զինուորը, բրիտանական թմբուկը և բրիտանական դրօշակը աշխարհիս բոլոր ծայրերում. բայց կայ մի ուրիշ բան ևս, որը նոյնպէս յայտնի է աշխարհիս բոլոր կողմերում, որը լաւագոյն է, քան բրիտանական պահպան զինուորը, բրիտանական թմբուկը և որը ամեն տեղ ուղեկցում է բրիտանական դրօշակին. դա սահմանադրական ազատութեան բրիտանական զգացմունքն է։ Մեր մեծ կայսրութիւնը կարող է պարծենալ նրանով, որ այնտեղ, ուր նա ընթացել է, նա թողել է իր վրանը,—ազատութեան և սահմանադրական հիմնարկութիւնների վրանը»։

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

—

Լօնդօն, յունիսի 15/27-ին

Ապրիլի առջի օրերը, դեռ հելլէն-թիւրքական պատերազմը չը սկսած, համառօտ թղթակցութեամբ մը կամփոփէի Լօնդօնի մամուլին կարծիքը պատերազմին հաւանական հետևութիւնների մասին։ Ցոյներուն համար աղետաբեր ելք մը անխուսափելի կերևար. դէպքերը հաստատեցին այս դուշակութիւնները։ Ճակատամարտներու միջոցին թղթակցութիւնները չէին կըրնար մեծ չահեկանութիւն ունենալ. հեռագրին գործն էր շուտ-շուտ խօսել։ Հիմա, ուղևորութենէ մը վերադարձէ յետոյ, նորէն կը չարունակեմ գրել նոր կացութիւններու համեմատ։

Խաղաղութեան դաշնագրին համար Պոլիս կատարուելու վրա եղող բանակցութիւնները, որոնք մեզի համար կարևորութիւն ունին, կը չարունակուին յամրօրէն և գաղտնապահութեամբ։ Օրը օրին հասած տեղեկութիւնները սակայն իրարու կը հակասեն։ Մինչ մէկ կողմէն կը խօսուի Դրան հաշտասիրական տրամադրութիւններու վրա, ու եւրօպական համաձայնութիւնը կը հռչակուի միշտ անքակտելի, միւս կողմէն հաւատի ազբիւրներէ կը հաղորդուի, թէ սուլթանը բնաւ տրամադիր չէ Թէսալիան վերադարձնել Յունաստանին, և թէ իր այս տրամադրութեան մէջ կը վայելէ Գերմանիոյ գաղտնի աջակցութիւնը։ Եթէ հաստատուի այս իրողութիւնը, ուրեմն «եւրօպական համաձայնութիւն» բացատրութիւնը պարզապէս հնարք մըն է գերմանական չահերը նպաստաւորող։ Լօնդօնի մամուլը որոշ ու պարզ կարծիք չէ յայտնած դեռ. միայն «Մօրնինկ Բոստ», արքունական թերթը, ուշագրաւ խմբագրականի մը մէջ կարծիք կը յայտնէ, թէ հաւանական չէ, որ Գերմանիա առանձինն խաղ մը խաղայ, և թէ այսօրինակ պատահականութեան մը մէջ անգլիական կառավարութիւնն անշուշտ այլ ևս չի մասնակցիր եւրօպական համախմբումին։

Կրետէն Յունաստանին ձգելով Թէսալիան Թիւրքիոյ պահելու խնդիրը կրկին հրապարակ նետուած է, առանց սակայն ի և է ստոյգ տեղեկութեան մը։ Եթէ մեր ազգային չահերը մտածենք, փափագելու ենք, որ եթէ երբէք Կրետէն ինքնօրինութիւն պիտի ստանայ, գոնէ Թէսալիան Թիւրքիոյ մնայ։ Հիմակուց արդէն կը խօսուի, թէ Կրետէի իսլամները պիտի փոխադրվին Թիւրքական ուրիշ նահանգներ. եթէ Թէսալիան Թիւրքական նահանգ դառնայ, կրետական գաղթականութիւնը հոն կը զետեղուի, իսկ հակառակ պարագային մէջ նորէն մեր խեղճ գաւառներն են, որ այդ արիւնզակ, դառնացած իսլամ յոյներուն օթեան պիտի ըլլան։ Ամեն անգամ որ եւրօպական Թիւրքիայէ մաս մը կանջատուի, ինքնօրէն կըլլայ, մենք հայերս իբր քրիստոնեայ և ազատութիւն սիրող, կուրախանանք ու կը ծափենք. և սակայն ամեն մէկ անջատում նոր հարուած մըն է հայ ժողովրդին համար։ Հայաստան ու հայաբնակ գաւառները կը լեցուին փախստական գաղթականները, որոնք տարօրինակ կերպով կը նեղեն ու կը չարչարեն իրենց գաղթած երկրին բնիկ քրիստոնեաները։

Քաղաքականութեան ամբողջ ուշադրութիւնը հելլէն-թիւրքական բանակցութիւններուն վրա դարձած ըլլալով, հազիւ թէ երբեմն-երբեմն օրագրութեան մէջ քանի մը տող կը սպրդի մեր խնդիրներու մասին։ Աւելորդ է ըսել, թէ բարենորոգումներու հարցը հիմա և ոչ իսկ կը յիշատակուի, ու Հայաստանի տառապանքներուն վրա բօղէ մը իսկ աւ խորհող չի կայ, գոնէ առ այժմ։ Մանր մունր լուրեր միայն կը լսուին, «մանր մունր» թէն, սակայն կրնան մեզի համար մեծ նշանակութիւն ունենալ։

Վանի ահեղ կոտորածին տարին երբ կը բոլորի, մի և նոյն ատեն Վանը կրկին խռովութիւններու կենթարկուի։ Քաղաքային անձ մը, Շէմսէդդին-պէյ, Վասպուրականի կուսակալ էր. և ահա այդ պաշտօնը կը տրուի զինուորականի մը, Շէմսի փաշայի։ Այս փոփոխութիւնը կը նշանակէ թէ խստութիւնները պիտի սաստկանան Վասպուրականի համար, և հալածանքը աւելի անողոք պիտի ըլլայ, քան երբէք։ Հեռագիր մը կը հաղորդէ թէ այս փոփոխութեան պատճառն է այն զրոյցը, թէ փախստական հայերու խումբ մը կը հաւաքուին պարսկական սահմանագլխին վրա։ Չենք կրնար ընդունել թէ այս վերջին լուրը ստոյգ ըլլար. նոյն իսկ այսօրինակ համախմբում մը չի կըրնար ենթադրել տալ թէ փախստական, տարագիր հայերը յարձակում մը պիտի ընեն։

Ուրիշ լուր մըն ալ Սև ծովու եզերքէն կուգար։ Մայիսի մէջ էր որ Ինէպոլու պատահած դէպքի մը մասին խօսուեցաւ, սակայն ինչ ըլլալը չի հասկացուեցաւ, ու ոչ ոք ստոյգ տեղեկութիւն մը տուաւ. հիմա հետևեալը կը հաղորդուի։ Սինոպի գաւառակին պատկանող Պոյապատ քաղաքին մէջ մայիս 2-ի շաբաթ իրիկունը լուր տարածուեր է թէ քրիստոնեաները յարձակում պիտի ընեն քաղաքին վրա։ Թէն այս լուրերը չի հաստատուեցան, սակայն Թիւրքերը անմիջապէս զէնքի դիմելով դիշերը իսկ սկսան յարձակիլ քրիստոնեաներու տուներուն վրա։ Երկու հայ ու չորս յոյն վիրաւորուեցան։ Գայմագամը չի կրնալով հանդարտութիւնը վերահաստատել, Քասիմանիի հայոց առաջնորդը հրաւիրուեցաւ։ Առաջնորդը հաղորդակցութեան մտաւ ընդհա-

նուր կառավարչին հետ և ոստիկան զինուորներու գնդապետ մը կռուին տեղը ղրկուեցաւ։ Այս պաշտօնեան վեց թիւրք ձերբակալեց, բայց հակառակ այս բանին դարձեալ քաղաքը 15 օր մնաց յուզեալ վիճակի մէջ։

Առ այժմ հայկական խնդիրը մոռացնել չը տուող լուրերը ասոնք են Լօնդօնի մէջ. իսկ Բարիզ քիչ մը աւելի ոգևորութիւն տեսայ, թէև առանց ո և է յոյսի։ Մամուլը ամեն օր առիթ մը կը գտնէ յիշատակելու հայկական կոտորածները և սուլթանին վրա յարձակելու։ Ցունական պարտութիւնը շատ ծանր եկած է Ֆըրանսացի գրողներու սրտին։ Սակայն օսմանեան արժէթուղթերը կը բարձրանան ու կը բարձրանան. ահա կենսական խնդիրը։

***

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, յունիսի 1-ին

Մեր քաղաքը հանդարտ է այժմ. քանի օր էր, որ Թուրքերը սկսելով Իրանց Մուհարրէմի սգի օրերը, այս անցած ուրբաթ օրը կատարեցին իրանց մարգարէների նահատակութեան յիշատակը, կամ ինչպէս Իրանք ասում են՝ աշուրայի ոտը։ Այս տարի այդ սուգը, որ տևում է ընդհանրապէս 10 օր Մուհարրէմի ամսի սկզբից հաշուելով, անցաւ սովորականից չափազանց թոյլ և ճնշված կերպով, չնորհիւ կառավարութեան ձեռք առած միջոցների։ Զը նայած շատերը կարծում էին, որ այդ ուրբաթ օրը կրկին կը ծագի որ և է խռովութիւն, սակայն, բարեբաղդաբար, ոչինչ չը պատահեց, որովհետև կառավարութիւնը ամենայն զգուշութեամբ հսկում էր հայոց թաղերի վրա, թոյլ չը տալով նոյն իսկ, որ ըստ սովորութեան, խմբեր անցկենան հայոց թաղերից կամ փողոցներից։

Ինչպէս յայտնի է մօտ մի ամիս է, որ թագաժառանգը Թաւրիզից գնացել է Թէհրան, որպէս զի իր հայրը, վեհափառ Շահը՝ իր առողջութիւնը վերականգնելու համար անցնէր Եւրոպա, կամ Թաւրիզ. բայց այժմ, ինչպէս երևում է, Շահը միայն ուզել է այդ պատրակով թագաժառանգին տանել Թէհրան և միւս պետութիւնների արքունիքների նման ժառանգին իր մօտ պահել։ Իսկ ինչպէս ասում են, Շահը այլ ևս ոչ մի տեղ չը պիտի գնայ։ Ճիշդ չէ այն լուրը, որ Շահը արդէն մեկնել է Թէհրանից։

Յայտնի է, որ Ուրմիայի ասորիները կրօնափոխ դառնալով ընդունել են ռուսադաւանութիւնը։ Անցեալներում մի քանի ռուս քահանաներ գալով Թաւրիզ և անցնելով Ուրմի՝ իրանց նոր հօտը կառավարելու համար՝ սիրալիր և պատուաւոր ընդունելութիւն են գտել։ Այդ բանին նախանձելով բողոքականները, և չը նայած իրանց ընկերութեան մանկութեան, վերջերս 3000 թուման յանձնելով նորեկ հայ քարոզչին՝ ուղարկեցին այստեղից Սալմաստ, այնտեղ նոր ուժերով, նիւթականի միջոցով բողոքականութիւնը տարածելու համար։ Խօսելով բողոքական կամ ամերիկական ընկերութեան մասին, աւելորդ չէր լինի ասել, որ այդ ընկերութիւնները իրանց մանկութեան պատճառով քիչ-քիչ ուղում են փակել իրանց հաստատութիւնները, ինչպէս փակել են Ուրմիայի և Սօուղբուլաղի դպրոցները։

Արշակունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսի զինուորական կուսակցութիւնը սակայն չէ կամենում զէնքը վայր դնել։ «Daily News» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը ասում է, որ այդ կուսակցութիւնը ամեն ջանք գործ է դնում՝ ազգային շարժում առաջ բերելու համար։ Հասարակութեան մէջ ամեն տեսակ պատերազմական երգեր են տարածված, որոնց մէջ փառաբանվում է Թիւրքաց զէնքի յաղթութիւնը, զանազան թուցիկ թերթեր նկարագրում են մահմեդական զինուորների հերոսական վարմունքը։ Այս օրերս մինչև անգամ լոյս տեսաւ Թիւրքաց կայսրութեան նոր քարտէզը, Թեսալիան աւելացրած։ Մաքերը Կ. Պոլսում սաստիկ յուզված են։ Դեսպանների խորհրդակցութեան երրորդ օրը մի քանի հարիւր մարդիկ հաւաքվեցին պալատի մօտ, Թօփխանէում, սպասելով դեսպանների դուրս գալուն և յայտնի դիտաւորութիւն ունենալով յարձակում գործել նրանց վրա։ Բարեբաղդաբար, ցոյց անողները սխալվեցին և հաւաքվեցին այն ժամանակ, երբ դեսպանները վաղուց արդէն գնացել էին իրանց տները։ Այդ ամբոխը ցրվելու համար ստիպված եղան մի վաշտ զինուորներ կանչել։

—Բոլգարական լրագիրները հաղորդում են, որ պատերազմի դաշտից վերադարձող բաշիբուզուկները, գոռոզացած մուսուլմանների տարած յաղթութիւնից, թոյլ են տալիս իրանց ամենասարսափելի բռնաբարութիւններ և անգթութիւններ գործել Մակեդոնիայի այն գաւառների բնակիչների գլխին, որոնցով անցնում են։ Սկոպլիանակի վիլայէթում աւարառութիւնները և հրդեհները ամենօրեայ դէպքեր են դարձել. լինում են և սպանութեան դէպքեր. նոյն իսկ կանոնաւոր զօրքը չէ կամենում յետ մնալ բաշիբուզուկներից։

—Աթէնքից հեռագրում են «Indépendance Belge» լրագրին յունիսի 7-ից. «Այն յանձնաժողովը, որին յանձնված էր քննել գործերի վիճակը Թեսալիայում, վերջացնում է այս օրերս իր աշխատութիւնը։ Այդ յանձնաժողովի զեկուցման մէջ ասված է, որ Թիւրքերի հասցրած վնասները ահագին են։ Բազմաթիւ գիւղեր բոլորովին քարուքանդ են եղած։ Հաստատում են, որ Նեգերոս, Գրիցօօվալի և Մելունեան անցքը կանցնեն Թիւրքիային։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի։ «Գունդուտ» զրահակիրը, Տրանզունդեան նաւահանգստի մուտքի մօտ՝ զարկվելով խութին, որ նշանակված չէր ծովային քարտէզի վրա, այնպէս վնասվեց, որ չը նայելով ձեռք առած միջոցներին, ընկղմվեց ջրի մէջ։ Օֆիցէրները և զինուորները ազատվեցին։

ՎԻՆԶՕՐ, 14 յունիսի։ Յունիսի 13-ին հրաշալի լուսավառութիւն կար, որի ժամանակ թագուհին զբօսանք կատարեց կառքով։

Կ. ՊՕԼԻՍ, 15 յունիսի։ Բ. Դուռը պահանջում է այնպէս ուղղել սահմանը, որ սահմանային գիծը կազմեն Սալամվերիա և Թերիոսը մինչև Տուրնավօս։

ԲԵՐԼԻՆ, 14 յունիսի։ Ռեյխստագը, առանց որ և է վիճաբանութիւնների, ընդունեց թնդանօթաձիգ զօրքին նոր զէնքերով զինաւորելու նախագիծը, որից յետոյ նստաշրջանը փակվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունիսի։ Թագաւոր կայսրը բարձրագոյն բարեհաճեց թոյլ տալ հոգևոր սեմինարիաների առաջին կարգի ընթացաւարտներին մտնել Իւրիեվի համալսարանի բոլոր ֆակուլտէտները (բացի աստուածաբանական ֆակուլտէտից), նախապէս՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան որոշած քննութեանը ենթարկվելով։ Այդպիսով, Վարշավայի (պատմական-լեզուագիտական և ֆիզիկո-մաթեմատիական ֆակուլտեանները), Տօմսկի և Իւրիեվի համալսարանները կարող են մտնել հոգևոր սեմինարիաների աշակերտները. իսկ մնացած համալսարաններում կընդունվեն միայն հոգևոր սեմինարիաների այն աշակերտները, որոնք գիմնազիաներում քննութեամբ ստացած հաստատեան վկայականներ կը ներկայացնեն։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 15 յունիսի։ Ուէլսի իշխանի և ուրիշ արքայազունների ներկայութեամբ կայացաւ անգլիական թագուհու յօբելեանի առիթով եկած օտար նաւերի նաւահանդէս։ Մասնակցում էին 167 նաւեր։ Տեսարանը անման էր նաւատորմային տարեգրութեան մէջ։

ԿԱԼՕՄԷԱ, 16 յունիսի։ Քաղաքը հեղեղված է։ Շատ տներ տարված են։ Կալօմէայի և Տուրկայի մէջ, երկաթուղու գնացքը անցնելու ժամանակ, կամուրջը խորտակվեց, և ջուրն ընկան չոգեկառքը, պօստատար վագօնը և հինգ ուրիշ վագօններ։ Սպանված են պօստային երեք պաշտօնեաներ և երեք ծառաներ. մի քանի ճանապարհորդներ վիրաւորված են։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 13-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	93	ր.	85 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	»	$92^5/_8$ »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37	»	$32^5/_8$ »
Ոսկի — — արժէ . .	7	»	50 »
Մաքսային կուպօններ — . .	—	»	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5	»	7 »
4% պետական բէնտա	99	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	$283^1/_2$	»	— »
— — երկրորդ —	$245^1/_2$	»	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$205^3/_4$	»	— »
5% պետական երկաթուղ. բէնտա	—	»	— »
4% ներքին փոխառութեան . . .	$98^3/_4$	—	»
$4^1/_2$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$101^1/_2$	»	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.	—	»	— »
$4^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի	$101^3/_8$	»	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մեռալ. . .	—	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	$101^1/_8$	»	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$101^3/_8$	»	— »
Օդէսայի — —	$101^1/_8$	»	— »
Թիֆլիսի — —	$99^1/_2$	»	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	—	»	— »
5% — — — . .	—	»	— »
Բուխարայիսի — — — . .	—	»	— »
5% — — — . .	—	»	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։

Դ. Դ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Դ. ԳՈՒՐԿՕ—$1^1/_2$—$2^1/_2$ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.

Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիխարեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Պետերբուրգի բժշկական ակադէմիայի ներքին հիւանդութիւնների կլինիկայի օրդինատոր, ամառվայ ընթացքում ընդունում է հիւանդներին Էսէնտուկում և Կիսլավոդսկում։

ՄԻ ՊԱՐԿԵԶՏ ՏԻԿԻՆ

Առաջարկում է իր ծառայութիւնը ամարանոց գնացողներին, տնտեսութեամբ զբաղվելու կամ հիւանդներին խնամելու։

Հասցէն՝ Противъ Кадетскаго Корпуса. Безимянная ул. домъ Арутюнова, во дворѣ номеровъ «Чикаго». (№ 69) 2—2

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Խ. ՑՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ԿԱԶՄԱԾ

«ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՀԱՇՈՒԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ ՄԻ ՔԱՆԻ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ», Շքեղ թղթի վրա տպած։ Գինն է 5 ռուբլի։ Դիմել գրավաճառանոցներին։

(№ 68) 2—3

ՄԱՆԿԱԲԱՐՁ

ՍՕՓԻԱ ԽԻԶԱՆԵԱՆ

Տեղափոխվեց Սերգիեվսկայա փողոց, տ. № 1. (Սօլօլակում)

(№ 36) 5—10

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզօն, Սամսօն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, յունիսի 25-ին (յուլիսի 7) ԱՐՄԷՆԻ չոգենաւը, նաւապետ ԲՈՒԼ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պ ա կ ա ս գ ն ե ր ով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների տանելու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԴՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիսեդեկ Հերչինրօզերին։ (№ 16) 12—20

1897

ՏԱՐԻ 55-ԵՐՈՐԴ „ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ“ ՏԱՐԻ 55-ԵՐՈՐԴ

Բազմավէպ հանդիսարան ներկայ տարւոյս (1897) կը հրատարակուի նոյն ծաւալով, աւելի ճոխ և բազմակողմանի նիւթեր պարունակելով։ Կը ծանուցանենք մեր ընթերցողաց, թէ փոքրիկ նորութիւն մի պիտի ընենք թերթիս մէջ, պարզաբար առ ի փոքր, որ եթէ օգտակար լինի և ազգայիններէն ևս խրախոյս տեսնենք, պիտի շարունակենք, նաև յետագայ տարիներուն մէջ։—Հանդիսիս երրորդ թերթին մէջ պիտի ներկայացնենք մեր ընթերցողաց այլևայլ հետաքրքրական խնդիրներ և Հարցումներ՝ ազգային կամ օտար նիւթերու մասին՝ «Սուրհանդակ Բազմավէպի» վերնագրի ներքև. այդ խնդիրները և հարցումները կարող են ընել կամ ուղարկել մեզ՝ միայն «Բազմավէպի» բաժանորդները, որոնք՝ եթէ պատշաճ դատուին՝ լոյս կը տեսնեն նոյն կամ յաջորդ ամսոյն պրակին մէջ։ Իսկ այդ խնդրոց լուծումները և հարցմանց պատասխանները կարող է տալ և ուղարկել մեզ՝ բացի մեր բաժանորդներէն՝ նաև ո և է անձն, որոնք նոյնպէս լոյս պիտի տեսնեն,—կենթադրուի ընտրանօք և որոնք արժանաւոր դատուին,—յետագայ թերթի «Սուրհանդակին» մէջ։ Որոց որ լուծմունք և պատասխանիք պիտի հրատարակուին թերթիս մէջ, «Բազմավէպ» հանդիսի Տեսչութիւնն պիտի ուղարկէ նոցա իբր մրցանակ այլևայլ գնով գրքեր՝ ըստ կարգի իրենց արժանաւորութեան. ա. կարգի արժանաւորին՝ 10 ֆռանգաց արժողութեամբ գրքեր. բ. կարգի՝ 8 ֆռանգաց. գ. կարգի՝ 5 ֆռանգաց։ Կուզենք դիտել տալ միայն՝ որ այս մրցանակներուն ճանապարհի ծախքը ընդունողաց վրա է։

Պայմանք բաժանորդագրութեան. «Բազմավէպի» տարեկան բաժանորդագինն է 10 ֆռ. (4 ռուբլի), կանխիկ վճարելի։ Հանդիսիս Տեսչութիւնն իր վրա կառնու առ խրատանչիւր բաժանորդս ուղարկելի օրինակաց ճանապարհի ծախքը։

Միաբանութեանս Տպարանի Տեսչութիւնն 15% զեղչ կը շնորհէ մեր ամենայն բաժանորդաց, որոնք կուզեն ստանալ Տպարանէս լոյս տեսած գրքերը։ 2—3

ԿԱԿԱՕ ԲԼՕԿՕԼԸ

ՍԱՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ, արկղիկներում, $^1/_1$, $^1/_2$, $^1/_4$ և $^1/_8$ կիլոգրամ։ (GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անավէրպէնի 1894 թուի համաշխարհային ցուցահանդիսում։

Գլխաւոր պահեստը՝ դեղաբարական ապրանքների Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 50—50

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Іюня 1897 г.

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.